ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

28 հունիսի 2022թ.

N 278-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 583-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության կառուցվածքում ստեղծել բյուջետային գործընթացի իրավական ուղեկցման բաժին.

2. Այդ կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 583-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Recoverable Signature

X

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN TIGRAN 2112700065

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«28» հունիսի 2022 թ. N 278-Լ հրամանի

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«26» նոյեմբերի 2018թ.
N 583-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) իրավաբանական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրն ու նպատակն է՝

Իր իրավասության շրջանակներում Նախարարության նպատակներից, խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթների իրականացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակված, ինչպես նաև պետական մարմինների կողմից Նախարարության քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացությունների տրամադրումը.

2) պետական մարմինների, Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բարձրացված իրավական գնահատական պահանջող հարցերի վերաբերյալ դիրքորոշումների տրամադրումը, ընդ որում՝ Նախարարության առանձին կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությանը վերապահված հարցերով (օրինակ՝ գանձապետական գործառնություններին, գնումների մեթոդաբանությանը, եկամուտների քաղաքականությանը) Վարչությունը դիրքորոշում տրամադրում է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման նախաձեռնությամբ նախապես ձևակերպված իրավական ակտի տարաբնույթ ընկալման և ոչ միատեսակ կիրառության հարցի կապակցությամբ.

3) իրավական ակտերում փոփոխություններ, լրացումներ կատարելու վերաբերյալ համապատասխան առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում, և անհրաժեշտության դեպքում, իրավական ակտերի նախագծերի մշակումը.

4) անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներին մասնակցությունը, իրավական եզրակացությունների տրամադրումը.

5) Նախարարության, այդ թվում՝ դրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց գործողությունների և որոշումների դեմ վերադասության կարգով ներկայացված վարչական բողոքների քննության ապահովումը.

6) ֆիզիական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված Նախարարության առանձին կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությանը չվերապահված հարցերով դիմումների ընթացքի ապահովումը

7) Նախարարության կողմից կնքվող հաշտության համաձայնությունների նախագծերի մշակումը.

8) ի վնաս Նախարարության կայացված դատական ակտերի դեմ բողոք բերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանն ուղղված միջնորդությունների նախապատրաստումը.

9) ընդդեմ Նախարարության ներկայացված հայցի (հակընդդեմ հայցի), ինչպես նաև պետության գույքային շահերի, սակայն առանց Նախարարության մասնակցության քննվող դատական գործերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն համապատասխան տեղեկությունների տրամադրման ապահովումը.

10) Նախարարության գործառույթներին առնչվող Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների միջոցով Նախարարության կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործընթացի իրականացումը.

11) Նախարարության մասնակցությամբ քաղաքացիական և վարչական գործերով կայացված դատական ակտերի հարկադիր կատարման փուլում ներկայացուցչության իրականացումը.

12) դատարանի կողմից սնանկ ճանաչված իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Նախարարության կողմից հաշվառված պարտավորությունների առկայության դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտատիրոջ իրավունքների իրացման ապահովումը.

13) պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

14) բյուջետային գործընթացի շրջանակներում պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ առաջացնող գործարքների, այդ թվում՝ բյուջետային վարկերի, ծրագրային վարկերի, ենթավարկերի, երաշխիքների, փոխանցելի և հասարակ մուրհակների իրավական ուղեկցումը, հաշվառումը, մշտադիտարկումը, կատարման ապահովումը և ծրագրավորումը.

15) «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2.2-րդ մասի համաձայն լիազորված մարմնին առաջարկություններ ներկայացնելուն ուղղված Նախարարությանը վերապահված գործառույթների իրականացման ապահովումը.

16) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական դրամաշնորհների հաշվառման, հաշվետվությունների կազմման ու հրապարակման գործընթացի ապահովումը.

17) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը: Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Օրենսդրության բաժին.

2) Իրավական խորհրդատվության բաժին.

3) Պետական շահերի պաշտպանության բաժին.

4) Բյուջետային գործընթացի իրավական ուղեկցման բաժին.

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ

գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):